



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

1904. № 24.

2989

Հրատարակութիւն Յ. ԴԱԽԹԵԱՆԻ

Մ. ԳՕՐԿԻՅ



ՄԱԿԱՐ ԶՈՒԴՐԱ.

Թարգմանեց

ՍԻՄ. ԱՆԻՍԻԱՆ



Տ Ի Ֆ Ի Ի Զ

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի

Գուշկինեան փողոց, № 12.

1903

891.71

9-83

891.71

9-83

1-9 NOV 2010
27 AUG 2006

Հրատարակութիւն Ե. ԴԱԻԹԵԱՆԻ

Մ. ԳՕՐԿԻՅ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ՄԱԿԱՐ ԶՈՒԴՐԱ

Թարգմանեց
ՄԻՄ. ԱՆԻԵԱՆ

Տ Ի Ֆ Լ Ի Զ

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի
Գուշկինեան փողոց, № 12.
1903

02 APR 2014
2005 20A TS

10518



64090P .U

ԱՂԲԻՈՋ ԳՆՔԱՄԱՍ



60997-67

Дозв. ценз. 28 Юня 1903 г. г. Тифлисъ.

ՄԱԿԱՐ ԶՈՒԴՐԱ

Օրվեց փչում էր խոնավ ու ցուրտ քամի, տարածելով դաշտի մէջ եղերքի վրայ յարձակուող ալիքի ձղփանքի և եղերքի թփերի սոսափխնի մտախոհ մեղեդին: Երբեմն նրա թափերը բերում էին իրանց հեռ գրետատար, կնճռոտուած ու դեղին տերևներ և դղում նրանց խարոյկի մէջ, արձարծելով բոցը, որից աշտանային գիշերի մեղ չըջապատած մառախուղը յնցվում էր և, վախկոտութեամբ յետ քաշուելով, բաց անում մի վայրկեան ձախ կողմից—անսահման դաշտը, աջից—անհուն ծովը և ուղիղ իմ գիւմաց—Մակար Զուգրայի խոշոր կերպարանքը, ձեր գնչուի, որ պահապանում էր մեզանից յիսուն քայլ հեռու գտնուած իր բանակը, ձիերը:

Ամենաչնչին ուշադրութիւն չդարձնելով այն բանի վրայ, որ քամու սառն ալիքները բանալով չէքմէնը, մերկացրել են իր մագոս

բրօնզէ կուրծքը և անխղճօրէն խփում են նրան. նա կէսսլանակած՝ գեղեցիկ, աղատ և ուժեղ գիրքով, դէմքով դէպի ինձ, կանոնաւոր կերպով քաշում էր իր անագին ծխամորճից, դուրս էր թողնում բերանից և քթից ծխի թանձր քուլաներ և, աչքերն անշարժ յառած իմ գլխի վրայով դաշտի մեռած—լուռ խաւարի մի տեղին, խօսակցում էր ինձ հետ, չլուրով և ոչ մի շարժում չանելով՝ քամուտուր հարուածներից պաշտպանուելու համար:

—Ուրեմն դու դնում ես Այդ լաւ է: Դու լաւ բաժին ես քնարել: քեզ համար բարեկամ: Այդպէս էլ պէտք է դնաւ և նայիր կշտացար նայելուց, պատկիր ու մեռիր անն այդ է բոլորը:

—Կեանք: Այլ մարդիկ, — շարունակեց նա, սկեպտիկաբար լսելով իմ առարկածքիւնը իր շայդպէս էլ պէտք է ինձ: Էհէ: Իսկ քեզ ինչ դրանից: Միթէ դու ինքդ կեանք չես: Իսկ միւս մարդիկ ապրում են առանց քեզ և կ'ապրեն նոյնպէս առանց քեզ: Միթէ դու կարծում ես, թէ մէկին պէտք էս Դու հաց չես և ոչ էլ փայտ, ուրեմն պէտք էլ չես ոչ ոքի:

—Սովորել և սովորեցնել, ասում ես դու: Իսկ դու կարող ես սովորել մարդկանց բազմ

դաւոր դարձնել: Ո՛չ չես կարող: Դու առաջ աչնորոտիք, ու ապա ասա՛ ինչ պէտք է սովորել: Ի՞նչ սովորեցնել: Ամեն մարդ գիտէ թէ ինչ է պէտք իրան: Որոնք աւելի խելօք են, նրանք առնում են ինչ որ կայ, որոնք աւելի յիմար են, նրանք ոչինչ չեն ստանում, և անմեն որ ինքն է սովորում:

—Միծաղելի են նրանք՝ այդ քո մարդիկ: Կուտակուել են իրար վրայ և ճնշում են միմեանց, իսկ տեղ աշխարհիս վրայ՝ անն որքան կայ, — նա լայն տարածեց ձեռքը դաշտի վրայ: — Եւ միշտ աշխատում են: Ինչու ուրե՛հ համար: Ոչ ոք չգիտէ: Տեսնում ես, ինչպէ՞ս մարդը հերկում է, և մտածում ես, անն նա քրտինքի հետ կաթիլ-կաթիլ սպառում է իր ոյժը հողի վրայ, իսկ յետոյ կը պառկի նրա մէջ և կը փախ այնտեղ: Ոչինչ չի մնում նրանից, ոչինչ չի տեսնում նա իր դաշտից և մեռնում է ինչպէ՞ս ծնուեց — յիմար:

— Ի՞նչ է, միթէ նա ծնուեց նրա համար, որ քչիչորէ՛ հողը և մեռնէ, չկարողանալով նոյնիսկ գերեզման սիրելի իր համար: Տեղեկութիւն ունի նա, անհատութեան մասին: Դաշտային լայնութիւնն ըմբռնելի է նրա համար: Մովային ալքի դրոյցը կ'ուրախացնէ նրա սիրտը: Էհէ: Նա ստրուկ էր — հէնց որ ծնուեց, ողջ կեանքում էլ ստրուկ մնաց անն

այդ է բոլորը Ինչ կարող է նա անել իրան: Միայն խեղդամահ լինել, եթէ միքիչ խելօքանայ:

— Իսկ ես, ահա նայիր, 58 տարում այնքան եմ տեսել, որ եթէ գրուի այդ ամենը թղթի վրայ, հազար այնպիսի տոպրակների մէջ, ինչպիսին դու ունես, չեմ տեղաւորիր: Իէ, ասա տեսնեմ որ կողմերում ես չեմ եղել: Չես էլ կարող ասել: Դու չգիտես էլ այնպիսի տեղեր, ուր ես եղել եմ: Այնպէս պէտք է ապրել. գնա, գնա, — ահա այդ է բոլորը: Երկար մի կանգնիր մի տեղ — Ինչ կը գտնես այնտեղ: Ահա ինչպէս ցերեկն ու գիշերը յաւէտ վազում են միմեանց ետևից ընկած երկրի շուրջը, այնպէս էլ դու փախիր կեանքի մասին մտածելուց, որպէսզի չդադարես նրան սիրելուց: Իսկ թէ մտքերի մէջ խորասուզուեցիր՝ կը դադարես սիրել կեանքը, այդ միշտ այդպէս է լինում: Ինձ հետ էլ է եղել այդ: Էհէ՛: Եղել է, բարեկամ:

— Բանտ էի նստած, Գալիչինայում: Ինչո՞ւ եմ ապրում աշխարհիս վրայ, — մտածեցի ես մի անգամ ձանձրոյթից. — տաղտկալի է բանտում, բարեկամ, է, և ինչպէս տաղտկալի... Թախիծը տիրեց սրտիս, երբ ես նայեցի պատուհանից դաշտի վրայ, տիրեց և ճնշեց նրան, ասես մամլակով:

— Ո՞վ կ'ասէ թէ ինչո՞ւ է նա ապրում: Ոչ ոք չի ասիլ, բարեկամ: Հարցնել ես պէտք չէ դրա մասին: Ապրիր, ահա այդ է բոլորը: Երջիր ու անք ածա՛ շուրջդ՝ և դու երբէք թախիծ չես դգալ: Այնժամանակ քիչ մնաց ես ինձ խեղդամահ անէի դատիովս... Հնայան:

— Հէ, խօսել եմ ես մի մարդու հետ: Խիստ մարդ էր, ձերոնցից, ձեր ազգից: Պէտք է, ասում է, ապրել ոչ այնպէս, ինչպէս ինքդ ես ուզում, այլ այնպէս, ինչպէս ասումած է Աստուծո՞ւ խօսքում: Հնազանդուիր Աստուծու՞ն ես կը տայ քեզ ամեն բան, Ինչ կը խնդրես նրանից: Իսկ իր շորը ծակծկուած է բոլորովին, պատառոտուելու ես էլ ասացի՝ նրան, որ իրան նոր դգեսա խնդրէ Աստուծուց:

Բարկացաւ նա և դուրս արաւ ինձ հայհոյելով: Իսկ մինչև այդ ատում էր, թէ պէտք է ներել մարդկանց և սիրել նրանց: Թող դերեմն ներէր ինձ, եթէ իմ խօսքը վիրաւորեց նորին ողորմածութիւնը: Բան եմ սովորեցնում: Նրանք սովորեցնում են քիչ ուտել, իսկ իրանք ուտում են օրը տասն անգամ: Ես թքեց խարոյի մէջ և լսեց, նորից լցնելով ծխամորճը: Քամին ուռնում էր մի ինչ-որ բանի համար լալազին ու մեղմ, խաւարի մէջ խրխնջում էին ձիաները և բանա-

կից լսվում էր քնքուշ և կրքոտ մի երգ— խոն:
Այդ երգում էր գեղեցկուհի Նոնկան, Մակա-
րի դուստրը, նա ճանաչում էի կրճքի թանձր
տեմբրի նրա ձայնը, որ միշտ մի պեսակ
տարօրինակ անբառական և պահանջկոտ
հնչող էր— կրգէր նա մի երգ թէ ասէր «բա-
րև»: նրա թխամորթ կաթնագոյն գէւքի վրայ
կարծես դրոշմած էր թաղուհու վերսթիւն,
իսկ ինչ որ ստուերով քաշուած մուգկինա-
մոնագոյն աչքերում փայլում էր իր գեղեց-
կութեան թովչութեան և աննմանութեան
գիտակցութիւնը և արհամարհանք գէպի այն
ամենը ինչ որ ինքը չէր:

Մակարը տուաւ ինձ ծխամորճը:

— Ծխիր: Լաւ է երգում աղջիկը: Հապա:
Կուզէիր որ այդպիսին քեզ սիրէր: Ո՞չ:
Լաւ: Այդպէս պէտք է մի հաւատար աղ-
ջիկներին և հնուս պահիր քեզ նրանցից:
Աղջկայ համար համբուրուելը աւելի լաւ է
քե աւելի ակործելի, քան թէ ինձ համար
ծխամորճից ծխելը: Իսկ հէնց որ համբուրե-
ցիր նրան— մեռաւ արդէն քո սրտի կամքը:
Կը կապէ նա քեզ իր հետ մի բանով, որ չէ
երևում և կտրել չի կարելի, և կը տապ նրան
ողջ հոգիդ, իսկ քեզ միայն մնացեալը ձիշտ
եմ ասում: Զգուշացիր աղջիկներից: Ի՞՞՞՞՞նչ
խարում են հիշտ: Սիրում եմ, ասում է, քեզ

ամենը բանից աւելի աշխարհին վրայ: Իսկ
մէկ ծակիր նրան գնդասեղով, և նա կը պա-
տառէ սիրտդ: Դիտեմ, այն էհէ, և նրբան
գիտեմ: Դէ, բանեկամ, ուզում ես մի եղև-
լութիւն պատեմ, իսկ դու միտդ պահիր:
Եթէ միտդ պահես, ողջ կեանքումդ ազատ
թուշուն կը լինես:

«Կար աշխարհիս վրայ Զօրար անունով
մի դեռահաս գնչու: Լոյիօ Զօրար: Ամբողջ
վեռքրիան ու Զեխիան: Սլաօնիան և բո-
լորը, ինչ ծովի շուրջն է: ճանաչում էր
նրան: Վտրիճ տղայ էր: Չկար այն կողմե-
րում մի գիւղ, ուր հինդ-տասն հոգի Աս-
տծուն երգում տուած չլինէին սպանել Լոյ-
կօին: Իսկ նա ապրում էր իր համար, և եթէ
արդէն նրան դուր քար մի ձի, ուզես՝ մի
դունդ գօրք կանգնացրու՝ այդ ձին պահ-
պանելու, ողջ մէկ է: Զօրարը վրան նըս-
տած կը խաղացնէր նրան: Էհէ... միթէ նա
մէկից վախենում էր: Սատանան իսկ եթէ
դար նրա մօտ իր ամբողջ չքախմբով նա,
նրա վրայ դանակ էլ եթէ չբանացնէր, ան-
կասկած չարաչար կը հայհոյէր: Իսկ որ սա-
տանաների գնչերին մի-մի կղտիկ կ'ընծայ-
էր, այդ արդէն հաստատ բան էր:

«Նւ բոլոր բանակները նրան ճանաչում
էին, կամ լսած էին նրա մասին: Նա սիրում

էր՝ միայն ձիեր և էլ ուրիշ ոչինչ, այն էլ ոչ ևրկար—միքիչ ման էր գալիս և ապա ծախում. իսկ փողերը՝ ով ուզում էր, նա էլ ստալիս էր: Ոչինչ նուերական չունէր նա. պէտք էր քեզ նրա սիրտը, նա ինքը կը պոկէր կրծքից ու կը տար քեզ, միայն թէ դրանից լաւ լինէր քեզ: Ահա թէ ինչպէս էր նա, բարեկամ:

«Մեր բանակը թափառում էր այնժամանակ Բուկովինայում. սրանից 10 տարի առաջ էր այդ Մի անգամ, յիշում եմ՝ դարնահային՝ մի գիշեր նստած էինք մենք. ես, դինուոր Դանիլան, որ Կոչուտի հետ միասին պատերազմել էր ծեր Նուոր և շատ ուրիշներ հաս և Բաղդան՝ Դանիլայի գուպորը»:

«Դու իմ Նոնկային ճանաչում ես: Թագուհի աղջիկ է. սակայն Բաղդային նրան հաւատարել չի կարնելի. մեծ պատիւ կը լինի Նոնկային: Նրան Բաղդային մասին խօսքերով չես էլ կարող բան ասել: Նրան գեղեցիկութիւնը դուցէ կարելի է շութակի վրայ նուագել, բայց այդ էլ կարող է նա, ով այդ շութակն իր հոգու պէս գիտէ»:

«Նա շատ կտրիճ սրտեր չորացրեց. օհ, շատ Մօրավի վրայ մի ծեր մագնատ, մագի մի փունջ ճակատի վրայ կախուած, տեսաւ նրան և ապշեց-քարայցաւ: Նստել է ձիու

վրայ և նայում էր դաշտի վայրենա տենդով բռնուած լինի: Գեղեցիկ էր նա՝ ինչպէս նասանաւ տօն ծրին, ժոնպանը ռակեկար) սուրը կողքից շանթի նման փայլատակում էր հէնց որ ձին ուղքով գոփում էր ողջ այդ սուրը թանկագին քարերով ծածկուած և երկնագոյն թաւիչ գոսակի վրայ՝ իսկ երկնքի կտոր)՝ պատկանելի հօսպօդար էր ծերը: Նայեց նայեց՝ և ասաց. Բաղդային. — Հէյ, համբուրիր ինձ, մի քսակ փող կը տամ: Իսկ նա՝ չուռեկաւ: Երոթիչ ոչինչ և երբի, թէ որ սիրտդ ջրւանցրի, գէթ միքիչ քաղցր նայիր, — Իսկոյն մեղմեց քոռոզութիւնը ծեր մագնատը և նրա ոտքերի տակ ուղեց մի քսակ — մեծ քսակ, և դրայր իսկ Բաղդան կարծեց պատանամար ոտքով հրեց նրան ցեխի մէջ... Ըմբայ:

«Է՛հ, աղջիկ, — ախ քաջեց նա և մտրակեց ձին փոշին միայն ամպի պէս քուլով քուլա բարձրացաւ»:

«Իսկ յաջորդօրը նորից յայտնուեց: — Ո՛վ է նրա հայրը, — որտե՞ր նաման գտում է բանակում: Թանիլան գուրք և կան: — Մտիւր աղջիկդ, ինչ ուզում ես սննդ իսկ Դանիլան ինչ ասէ որ լաւ լինի: — Այդ միայն պաներն են ծախում պմեն ինչ՝ իրանց խոզերից սկսած մինչև սեփական խիղճը, իսկ

ևս կօշուտի հետ միասին եմ կռուել և ոչինչ չեմ ծախուում:

«Հէնց այն է ուղում էր ծեր մագնատը մտընչալ և խէնչալը հանել, բայց մեզանից մէկը վառուած արեթ մղեց նրա ձիու ականջը, նա էլ թոցրեց կործինստի մենք վերկացանք ու գնացինք: Մի օր ենք գնում, երկու, նայում ենք — հասաւ: — Հէյ, դուք, ասում է, Աստու և ձեր առջև խիղճս մաքուր է. տուէք աղջկան ինձ կին. ամեն ինչ կը բաժանեմ ձեզ հետ, ևս շատ հարուստ եմ: — Ողջ այրվում է, ինչպէս ձարխտոր քամուց, օրօրվում է թամբի վրայ: Մենք խորասուզուեցինք մաքերի մէջ: — Դէ, աղջիկս, խօսիր տեաններ, — ասաց Դանիլան բեխերի միջից:

— Թէ որ էգ արծիւն իր կամքով աղաւթ բոյնը մտնէր, նա ինչ կը դառնար, — հարցրեց մեզանից Ռադդան:

«Միծաղեց Դանիլան և մենք բոլորս նրա հետ:

— Լաւ, աղջիկս: Լսում ես, հօսպօդար: Գործը գլուխ չէ գալիս: Աղաւնեակներ որդնիր, նրանք աւելի շուտ համաձայնուող են: Եւ մենք առաջ գնացինք:

«Իսկ այն հօսպօդարը վերցրեց զգալը, զարկեց գեանին և քչեց ձին, այնպէս քչեց,

որ գետինը դողդողաց: Ահա թէ ինչպէս էր Ռադդան, բարեկամ:

«Այն, այսպէս անա մի գիշեր նստած ենք մենք և լսում ենք՝ երաժշտութիւն է լողում դաշտով: Լաւ երաժշտութիւն, ջղերում արիւն էր վառվում նրանից և կանչում էր նա մի տեղ: Զգում էինք բոլորս՝ այդ երաժշտութիւնից մի այնպիսի բան ուղեցինք, որից յետոյ էլ ապրել պէտք չլինէր, կամ եթէ ապրել՝ իբրև թագաւոր ամբողջ երկրի վրայ: անա ինչպիսի երգ էր, բարեկամ:

«Իսկ նա միշտ մօտենում էր: Ահա մթութեան միջից պարզ երևաց մի ձի, իսկ նրա վրայ մարդ է նստած և նուազում է մեզ մօտենալով: Կանգ առաւ խարոյկի մօտ, դադարեց նուազելուց և ժպտալով նայեց մեզ վրայ:

— Էհէ, Զօբար, դու ևս այդ կանչեց նրան Դանիլան ուրախութեամբ: Ահա ուրեմն Լոյկօ Զօբարը:

«Բեխերն իջել են ուսերի վրայ և խառնուել սեւթոյր գանգուրների հետ. աչքերը, ինչպէս պայծառ աստղեր, վառվում են, իսկ ժպտը — ամբողջ մի արև, Աստուած վկայ: Ասես դարբիններն են կռել նրան մի կտոր երկաթից ձիու հետ միասին: Կանգնած է ողջ, կարծես արիւնաշաղախ, խարոյկի կրա-


կողմ և փայլեցնում է ատամները խնդալույս էհէ, անիծուած լինեմ ես, եթէ չէի սիրում նրան արդէն ինչպէս ինձ, աւելի առաջ, քան նա ինձ մի խօսք ստաց կամ պարզապէս նկատեց որ ես էլ նոյնպէս ապրում եմ աշխարհիս երեսինս:

«Ահա, բնակիւմ, սրբախի մարդիկ են լինում: Հէնց նայեց աչքերիդ իսկոյն, ողբում է քո հոգին, և ընաւ ամօթ չէ քեզ այդ, այլ դեռ հպարտութիւն էլ է քեզ համար:

«Արդախի մարդու հետ ինքդ էլ ես լաւ դառնում էհէնց իսկոյն: Քիչ կան, ընկեր, այդպիսի մարդիկ: Եւ լաւ որ քիչ կան: Կա՛րգ որ շատ լինէր աշխարհիս վրայ, նրան լաւի տեղ չէին: Էլ հաշուի Հապա: Բայց լսիր վերջը:

«Բարդան էլ ասում է.— դու լաւ ես նուազում, Լոյկօ: Ո՞վ է շինել քեզ այդպիսի հնչուն և դպայուն ջութակ: Իսկ նա ծիծաղում է.— ես ինքս եմ շինել: Եւ շինել եմ նրան ոչ թէ փայտից, այլ դերանհաս աղջկայ կրծքից, որին շատ էի սիրում, իսկ լարերը նրա սրտիցն եմ հրակել: Ինչ ես միքիչ կեղծում է ջութակը, բայց ես գիտեմ կնտնտոցը ուղիղ բունել ձեռքումս: Տեսնում ես:

«Յայտնի է այդ մարդիկն աշխատում ենք իսկոյն շացնել աղջկայ աչքերը, որ սրանք



չվանն, մեր սիրտը, իսկ իրանք մշտով սքողունն մեզ համար: անա, Լոյկօն էլ նոյնպէս: Բայց հանդիպածն այնպիսիներից չէր: Բազմ գան շուռ եկաւ մի կողմ: Եւ յօրանջկով ասաց.— իսկ դեռ ասում էին, թէ Զօրարը խելօք է և ճարպիկ— համմն ասում են մարդիկ, է, — և հեռացաւ:

— Էհէ, գեղեցիկուհի, քո ատամները սուր են, — փայլեցրեց Լոյկօն իր աչքերը և իջաւ ձիուց:

— Բարե ձեզ, եղբայրներ: Ահա ես էլ ձեզ մօտ եկայ:

— Իլուխներիս վրայ հիւրը, արծիւ, — պատասխանեց նրան Դանիլան: Համբուրուեցինք, խօսեցինք և պառկեցինք քնելու... Խորունկ էինք քնել: Իսկ առաւօտեան տեսնում ենք Զօրարի դուխը կապուած է քուրջով: Ի՞նչ է այդ: Այդ ձին է վիրաւորել նրան սմբակով, քնած ժամանակ:

«Է, է, է: Հասկացանք մենք ով է այդ ձին և ժպտացինք քթներիս տակին, Դանիլան էլ ժպտաց: Ինչ է որ, միթէ Լոյկօն արժան չէր Բաղդային: Բայց ոչ: Աղջիկն ինչքան էլ լաւ լինի, էլ նրա հոգին նեղ է և ծանծաղ ուղեւ մի փութ ոսկի կախիր նրա վրից, միևնոյն է, նա՛ աւելի լաւ, քան ինչ որ է: Ճի լինիլ երբէք է՛, լաւ:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Ապրում ենք մենք ու ապրում նոյն տեղում: մեր գործերն այնժամանակ լաւ էին, Զօրարն էլ մեզ հետ էր: Ի՛նչ լաւ ընկեր էր: Ե՛ւ իմաստուն էր ծերի նման, և՛ ամեն բանի տեղեակ, և՛ ոռւսերէն ու հունդարերէն գրել-կարգալ դիտէր: Պատահում էր՝ սկսում էր խօսել—էլ չէիր քնիլ, կը լսէիր նրան: Իսկ նուազում էր—կայծակն ինձ դիպչի, եթէ աշխարհիս վրայ էլի մէկն այնպէս նուազել իմանար, ինչպէս Զօրարը: Հէնց կընսնտոցը տանում էր լարերի վրայով—սիրտդ սկսում էր դողալ, մի անգամ ևս անցնում էր—և հանգչում էր նա լսելով: Իսկ ինքը նուազում էր ու ժպտում: Եւ լալ և խնդալ կ'ուղենայիր միաժամանակ նրա երգը լսելիս: Ահա քեզ այս բոպէիս մէկը դառնապէս հեծում է, օգնութիւն խնդրում և կտրում է կուրծքդ, ասես, դանակով: Ահա և դաշտը հէքեաթներ է պատմում երկնքին՝ խաղաղ, թախծադին հէքեաթներ: Լաւ է լինում աղջիկը, ճամբելով կտրիճին: Կտրիճը դաշտ է ձայն տալիս աղջկան տեսութեան: Եւ յանկարծ—հէյ: Որտաի նման թնդում է ազատ, կենդանի երգը, և ինքն արևը, թվում է թէ հիմա կրսկսէ երկնքի վրայ պարել այդ երգի ձայնով: Ահա թէ ինչպէս էր, բարեկամ: Ամեն մի ձիւ մարմնիդ մէջ հասկանում էր այդ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

БИБЛИОТЕКА
ИМЕНИ
ДОКТОРА Я. А.
АХАРОНЯНА
СССР

երգը և դու ամբողջովին նրա գերին էիր դառնում: Եւ կթէ այն ժամանակ կանչէր Լոյկօն. «Կուենք դանակներով, ընկերներ», մենք բոլորս դանակ կը խաղայնէինք՝ ում վրայ էլ նա ցոյց տար: Նա ամեն բան կարող էր անել մարդու հետ, և բոլորը սիրում էին նրան, ջերմ սիրում, մենակ Ռադդան չէր նայում այն ջահէլի վրայ. և լաւ է, եթէ միայն այդ լինէր, բայց ծիծաղում էլ էր նրա վրայ: Պինդ էր նա նստել Զօրարի սրտում, շատ սլնդ: Ստամներն էր կրճտացնում Լոյկօն բեխից քաշելով, աչքերն անդունդից էլ մուծ էին նայում, երբեմն էլ նրանց մէջ մի այնպիսի բան էր փայլում, որ սկսում էիր հոգուդ համար վախենալ: Գնում էր գիշերով քաջ Լոյկօն դաշտ և լաց էր լինում այնտեղ նրա ջութակը մինչև առաւօտ, լաց էր լինում, թաղում Զօրարի աղատութիւնը: Իսկ մենք պառկած լսում էինք ու մտածում. ի՛նչ անել: Գիտէինք, որ եթէ երկու քար իրար վրայ են դրոյրվում, չի կարելի նրանց միջև կանգնել—հաշմանդամ կ'անեն: Այդպէս էլ գնում էր գործը: «Մի անգամ մենք բոլորս հաւաքուած նստած էինք և խօսում էինք մեր գործերի մասին: Զանձրոյթ զրացինք: Իսնիլան էլ խընդրում է Լոյկօն. «Երգիր, Զօրար, մի երգ»

МБС КУБ ГРЯДУРА
ГСС БИБЛИОТЕКА
ЗУИТ-АРМ. ССР
И. М. А. МЯСНИАН
И. УСУЛ. ԿՅԱՆ. Կ ԱՆԸՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԿԱԼ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐԱԿԱԼ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
1993

ուրախացրու հողիններս»։—Նա էլ աչք ածեց
Բաղդայի վրայ, որ նրանից քիչ հեռու դէմ-
քով գէպի վեր պառկած նայում էր երկնքին,
և խփեց լարերին։ Հէնց ասես խօսել սկսեց
ջուժակը, ասես՝ այդ ճիշտ որ աղջկայ սիրտ
լինէր։ Եւ երգեց Լոյկօն.

—Հէյ-հօպ։ Կրծքիս մէջ վառվում է կրակ,
Իսկ դաշտն այնպէս լայն է։

Քամու նման արագ է իմ սրընթաց ձին,
Ամուր է իմ ձեռքը։

«Դարձրեց Բաղդան գլուխը և, քիչ բար-
ձրանալով, քմծիծաղ նայեց երգչի աչքերին։
Արշալոյսի նման բոնկուեց Լոյկօն։

—Հէյ, հօպ-հէյ։ Դէհ, ընկեր իմ,

Սլանանք։ Ի՞նչ է, առջև

Պատած է դաշտը դաժան մշուշով,
Իսկ այնտեղ արշալոյսն է մեզ սպասում։

Հէյ-հօպ։ Թռչենք և դիմաւորենք օրը։

Սլացիր գէպի վեր,

Միայն բաշով չզիպչես

Գեղեցկուհի լուսնին։

«Ա՛յ երգում էր, է՛։ Հիմա էլ ոչ ոք չի եր-
գում այնպէս։ Իսկ Բաղդան ասում է՝ իսկ և
իսկ ջուր է քամում։

—Լաւ է այդքան բարձր չթռչես, Լոյկօ,
յանկարձ կ'ընկնես ու քթով ուղիղ ցեխի
մէջ կը խրուես, բեխերդ կը կեղտոտես, տես։



«Գաղանի նման նայեց նրա վրայ Լոյկօն,
բայց ոչինչ չասաց. համբերեց տղան և երգում
է իր համար.

—Հէյ-հօպ։ Յանկարձ օրը կը գայ այստեղ,
Իսկ մենք քեզ հետ քնած ենք։

է՛յ, հէյ։ Ախր մենք քեզ հետ այնժամա-
նակ

Ամօթի կրակով կ'այրուենք։

—Ի՞նչ երգ է,—ասաց Դանիլան,—երբէք
չեմ լսել այսպիսի երգ։ Թ՛նդ սատանան ինձա-
նից ծխամորձ չինէ իր համար, եթէ սուտ եմ
ասում։ Ծեր Նուռը բեխերն էլ էր շարժում,
ուսերն էլ խաղաղնում, և մեր բողբոլի սըր-
տովն էր Զօբարի երգը։ Միայն Բաղդան
չհաւանեց։

—Այդպէս, անձ մի անգամ մոծակն էր
բզղում, արծուի ճշոյրը տնադելով,—ասաց
նա. կարծես գլխներին սառը ջուր ածեց։

—Գուցէ դու, Բաղդա, մտրակ ևս ու-
ղում,—Դանիլան դիմեց նրան. իսկ Զօբարը
զարկեց գդակը գեանին և ասում է կաս-կա-
պոյտ կարած.

—Կայ, Դանիլա։ Տաք ձիուն՝ պողպա-
տէ կրասանակ։ Տուր ինձ աղջիկդ կնու-
թեան։

—Սա էլ բան ասաց,—ժպտաց Դանի-
լան.—ան, եթէ կարող ես և ուղում ես։

—Բարի,—ասաց Լոյկօն և դիմեց Բաղ-
դային։

—Դէ, աղջիկ, լսիր ինձ միքիչ, և մի
դոռոզանար։ Շատ աղջիկ եմ տեսել ևս, է,
չատ։ Բայց ոչ մէկը չի կպել իմ սրտին այն-
պէս, ինչպէս դու։ Է՛հ, Բագրատ, գերել ես իմ
հոգին։ Դէ ինչ է որ։ Ինչ որ պէտք է լինի, այն
էլ կը լինի, և... է՛հ, չկայ մի այնպիսի ձի,
որի վրայ կարելի լինէր ինքն-իրանից փախ-
չել... Գեղ կին եմ անում Աստուծո, իմ
պատուի, քո հօր և բոլոր այս մարդկանց
առաջին։ Բայց, տես, իմ կամքին չընդի-
մանաս—ինչ էլ որ լինի՝ ես ազատ մարդ եմ
և պիտի ապրեմ այնպէս, ինչպէս ուզում եմ,
—և նա մօտեցաւ նրան, ատամները սեղմած
և աչքերը փայլեցնելով։ Տեսնում ենք՝ ձեռքը
կարկանդակ Բաղդային։ Մտածում ենք՝ անհ
սանձեց Բագրատի դաշտային ձիերը։ Յանկարծ
տեսնում ենք, թափահարեց Լոյկօն ձեռքերը
և ծոծրակով դր՝ մի գետնի վրայ...

«Չարմանալի բան։ Ասես դնդակ զարկեց
ջահէլի սրտին։ Այդ Բագրատն էր, որ զարկեց
նրա ոտքերին մեծ մտրակով և դէպի իրան
քաշեց,—անհ թէ ինչու ընկաւ Լոյկօն։
Եւ նորից, անշարժ պառկած է աղջիկը,
ու ծիծաղում է անխօս։ Մենք նայում ենք,
թէ ինչ կը լինի. իսկ Լոյկօն նստած է գետնի

վրայ և սեղմել է գլուխը ձեռքերով, ասես
փախնում է, թէ նա հիմա կը ճայթի։ Ապա
հանդարտ վերկացաւ և գնաց դաշտ, ոչ ոքի
վրայ չնայելով։ Նուոր շնջաց ինձ՝ հսկիր
նրան։ Եւ ևս սողացի դաշտում Չօբարի ետեից
գիշերուայ մթութեան մէջ։ Ահա այդպէս, բն-
րեկամ»։

Մակարը թափ ատուց ծխամորճից մո-
խիւրը և նորից սկսեց լցնել նրան։ Ես աւելի
պինդ փաթաթուեցի չէքմէնիս մէջ և պառ-
կած նայում էի նրա ձեռք, արևից և քամուց
սեացած գէմքին։ Նա դաժան կերպով ու խըս-
տութեամբ շարժում էր գլուխը և մի բան
էր շնջում ինքն իրան. ձեռքից թաւ բե-
խերը շարժվում էին և քամին դղում էր նրա
գլխի մազերը։ Նա նման էր մի ձեռք, շանթով
այրուած կաղնու, բայց տակաւին զօրեղ,
ամուր և հպարտ իր ոյժով։ Ծովն առաջուայ
պէս շնջում էր եղերքին և քամին միշտ նոյն-
պէս անում էր նրա շունջը դաշտի վրայով։
«Տօնկան այլևս չէր երգում, իսկ երկնքում
հաւարուած ամպերը աչնանային գիշերը
դարձրել էին աւելի մութ և աւելի սարսա-
փելի»։

«Գնում էր Լոյկօն քայլ առ քայլ գլխակոր
և ձեռքերը կախ ձգած և ձորակում առտին
հասնելով նստեց քարի վրայ և ախ քաշեց»։

Այնպէս հառաչեց, որ սիրտս արիւնով լցուեց մեղքանալուց, բայց դարձեալ չմօտեցայ նրան: Վիշտը խօսքով չեա սփոփի—ձիշտ է: Հապա. մի ժամ է նստած նա, երկու, երեք, չի շարժվում, նստած է:

«Ես էլ պառկած եմ քիչ հեռուն: Պարզկայ է գիշերը, լուսինն արծաթով է լցրել ողջ դաշտը և հեռու տեսնվում է ամեն ինչ:

«Յանկարծ տեսնում եմ՝ բանակից շտապ դալիս է Բաղդան:

«Ահա նա մօտեցաւ Լոյկօին, սա չի էլ լսում: Դրեց ձեռքը նրա ուսին, ցնցուեց Լոյկօն, հեռացրեց ձեռքերը և վերցրեց գլուխը: Եւ յանկարծ վեր ցատկեց և առաւ դանակը: Ո՛ւհ, տեսնում եմ, մորթելու է աղջկան, և արդէն ուղում էի բանակին ձայն տալով վազել նրանց մօտ՝ յանկարծ լսում եմ:

—Թո՛ղ Գլուխը կը ջարդեմ:—Նայում եմ՝ Բաղդայի ձեռքին աորձանակ և նա նշան է դնում Զօրարի ձակատին: Ա՛յ սատանայ աղջիկ: Է՛հ, մտածում եմ, նրանք այժմ հաւասար են ոյժով, ինչ կը լինի յետոյ:

«Լսիր. Բաղդան գօտիկը խրեց աորձանակը և ասում է Զօրարին.—Ես քեզ սպանելու չեկայ, այլ հաշտուելու. դէ՛ն պիտի դանակը: Նա գցեց և մռայլ նայեց նրա աչքերին: Հիանալի էր այդ, եղբայր: Կանգնած են երկու:

մարդ և դադանաբար նայում են իրար, և երկուսն էլ այնպէս լաւ, քաջ մարդիկ: Նայում ենք նրանց վրայ սարդ լուսինն ու ես—և ահա բոլորը:

—Դէհ, լսիր ինձ, Լոյկօ, ես քեզ սիրում եմ, —ասում է Բաղդան: Միւսը միայն ուսերը շարժեց, ասես ոտքերն ու ձեռքերը կապում լինէին:

—Տեսել եմ ես շատ կտրիճներ, բայց դու աւելի քաջ ես և դեղեցիկ աւելի նրանից՝ հողւով և դէմքով: Նրանցից ամեն մէկն իր բեխերը կ'ածիլէր—հէնց որ աչքով անէի. նրանք բոլորն իմ ոտքս կ'ընկնէին՝ եթէ որ այդ ուղէի: Բայց ինչ շահ: Նրանք առանց այն էլ շատ քաջներից չեն, իսկ ես նրանց ամենքին կը կինարմատացնէի: Քիչ են մնացել աշխարհիս երեսին քաջ գնչուներ, քիչ, Լոյկօ: Ոչ ոքին ես երբէք չեմ սիրել, Լոյկօ, իսկ քեզ սիրում եմ: Բացի դրանից ես սիրում եմ աղատութիւնը: Աղատութիւնը, Լոյկօ, ես աւելի եմ սիրում, քան թէ քեզ: Իսկ առանց քեզ ես չեմ կարող ապրել, ինչպէս և դու առանց ինձ: Ահա ես ուղում եմ, որ դու իմը լինես և՛ հողւով, և՛ մարմնով, լսում ես:—Լոյկօն ժպտաց:

—Լսում եմ, քաղցր է սրտիս լսել քո խօսքերը: Դէ, խօսիր էլի:

—Ահա էլի ինչ, Լոյկօ. ողջ մէկ է,

անց էլ ման գաս, ես քեզ կը յազթեմ, իմը կը լինես: Ուրեմն զուր ժամանակ մի կորցնիր. քեզ սպասում են իմ համբոյրներն ու գգուանքները... Չերմ պիտի համբուրեմ քեզ, կնկո. իմ համբոյրի տակ դու կը մոռանաս ողջ քո քաջ կեանքը... և քո աշխոյժ երգերը, որ այնպէս ուրախացնում են երիտասարդ զընչուններին, էլ չեն հնչի դաշտերում. դու արդէն կ'երգես սիրային, քնքուշ երգեր ինձ՝ քո Բաղդային... Ուրեմն զուր ժամանակ մի կորցնիր, — այս որ անացի, կը նշանակէ՝ դու վաղը կը հպատակուես ինձ, ինչպէս առաջ իւնակ ընկերիդ: Ամբողջ բանակի անջն գլուխ կը տաս մինչև ոտքերս և կը համբուրես աջ ձեռքս և այն ժամանակ ես կը լինեմ քո կինը: Ահա թէ ինչ ուզեց սատանի աղջիկը: Այդ իսկի ըստած բան չէր. միայն հին ժամանակները չերնօգորցիների մօտ, ասում էին ծերերը, այդպէս էր, իսկ դնչունների մօտ՝ երբեք: Եղբայրութիւն աղջկայ հետ: Դէ, բանակում, հնարիր աւելի ծիծաղելի մի բան: Մի տարի էլ որ ձաքացնես գլուխդ, էլի չես հնարիլ:

«Մի կողմ թուաւ Լոյկօն և կրծքից վերաւորուածի նման այնպէս դոռաց որ ձայնը դաշտը բռնեց: Դողբողաց Բաղդան, բայց չմատնեց իրան:

— Դէ, ուրեմն մնաւ բարով մինչև վաղը, իսկ վաղը դու կ'անես այն, ինչ որ քեզ հրամայեցի: Լսում ես, կնկո:

— Լսում եմ, կ'անեմ, — հառաչեց Զօրարը և մեկնեց նրան ձեռքը: Բաղդան նրա վրայ չնայեց էլ, իսկ Լոյկօն երերաց, ինչպէս քամուց կոտորուած ծառ և գետին ընկաւ. հեծկլտալով և խնդալով:

«Ահա ինչպէս տանջեց կտրիճին անիծած Բաղդան: Հազիւ հազ նրան ուշքի բերի:

«Էհէհ: Ո՞ր սատանային պէտք է, որ մարդիկ վշտով ցաւեն: Այն ո՞վ է սիրում լսել, թէ ինչպէս է հառաչում մարդկային սիրտը՝ պատառ-պատառ լինելով վշտից: Ահա մտածիր այստեղ...»

«Լերադարձայ ես բանակ և բոլորը պատմեցի ծերերին: Մտածեցին և վճռեցին սպասել ու նայել թէ ինչ կը լինի այդ ամենից յետոյ: Իսկ ահա ինչ եղաւ: Երբ մենք բոլորս երեկոցեան հաւաքեցինք խարոյկի շուրջը, եկաւ և Լոյկօն: Նա չիօթուած էր և սաստիկ նիհարել էր մէկ գիշերուայ մէջ, աչքերը ներս էին ընկել. նա վայր իջեցրեց նրանց և չբարձրացնելով ասաց մեզ.

— Ահա ինչպիսի բան, ընկերներ, նայեցի այս գիշեր իմ սրտի մէջ և նրանում չգտայ մի տեղ իմ նախկին ազատ կեանքի համար:

Այնտեղ Բաղդան է ապրում միայն, անս այս է բոլորը: Ահա նա, գեղեցկուհի Բաղդան՝ որ ժպտում է թագուհու նման: Նա սիրում է իր ազատութիւնը և ես վճռեցի խորը գլուխ տալ Բաղդային, այդպէս հրամայեց նա, որ ամենքը տեսնեն, թէ ինչպէս նրա գեղեցկութիւնը նուաճել է Լոյիօ Զօբարին, որ մինչև այդ խաղում էր աղջիկներին հետ, ինչպէս բազէն բաղերին հետ: Իսկ յետոյ նա կը լինի իմ կինը և կը փառաբարձէ ու կը համբուրէ ինձ, այնպէս որ ես արդէն այլևս չեմ ուզենալ ձեզ համար երգել, ազատութիւնս էլ չեմ ափսոսալ: Այնպէս չէ՞, Բաղդա:— Լոյիօն բարձրացրեց աչքերը և կասկածով նայեց նրա վրայ: Բաղդան լուռ և խիստ գլխով արաւ և ձեռքով ցոյց տուաւ իր ոտքերը: Իսկ մենք նայում ենք և ոչինչ չենք հասկանում: Մինչև անգամ հեռանալ էինք ուղում մի տեղ, միայն թէ չտեսնենք, թէ ինչպէս Լոյիօ Զօբարը աղջկայ ոտքերը կ'ընկնի, թէ կուզ այդ աղջիկը լինէր ինքը Բաղդան: Մի ինչից-որ ամաչում էինք, ափսոսում և տխրում:

— Իէ, — կանչեց Բաղդան Զօբարին:

— Իհէ, մի շտապիր, կը հասնես, դեռ կը ձանձրանաս էլ... — ծիծաղեց նա: Ասես սող-պատը դնողնդաց, — այնպէս ծիծաղեց:

— Ահա այս է բոլորը, ընկերներ: Ի՞նչ է մտում: Իսկ մտում է փորձել, արդեօք Բաղդայի սիրտն այնպէս ամուր է, որպէս նա ինձ ցոյց էր տալիս: Փորձեմ ուրեմն, ներեցէք ինձ, եղբայրներ:

«Է՛հ, մենք դեռ նոյնիսկ գլխի ընկնել չկարողացանք, թէ ինչ է ուղում անել Զօբարը, իսկ երբ գլխի ընկանք, արդէն Բաղդան պանակած էր դետնի վրայ և նրա կրծքում ցցուած էր Զօբարի ծուռ դանակը մինչև կոթը: Մենք քար կտրեցինք:

«Իսկ Բաղդան դուրս քաշեց դանակը, դէն գոցեց նրան և, սխմելով վէրքը իր սե մազերի ծամով, ժպտան երեսին ասաց մեզ բարձր և պարզ ձայնով:

— Մ'նստ բարով, Լոյիօ: Ես գիտէի, որ դու այդպէս կ'անես... — և մտաւ...

«Հասկացար աղջկան, բարեկամ: Ահա ինչպիսի դիւային աղջիկ էր, թող յաւիտեանս յաւիտենից անիծուած լինեմ ես... է՛հ...»

— Է՛հ, և կ'երկպագեմ ես մինչև քո ոտքերը, հարստ թագուհի, — Լոյիօի ծղարտոցի ձայնը դաշտը բռնեց և դետին ընկնելով հոգեց չրթունքները մտած Բաղդայի ոտքերին և անչարժ մնաց: Մենք հանեցինք գլխարկներս և լուռ կանգնած էինք:

«Ի՞նչ կ'ասես այսպիսի դէպքում, բարե-

կամ: Այդ է, է: Նուն ուղում էր ասել.
«Պէտք է կապել նրան»: Բայց ոչ մի ձեռք չէր
բարձրանալ Լոյկո Զօբարին կապելու, ոչ մէ-
կինն էլ չէր բարձրանալ, և Նուռը գիտէր
այդ: Չեղբով արաւ նա և մի կողմ քաշուեց:
Իսկ Դանիլան վերջրեց դանակը, որ Բադ-
զան դէն էր ձգել, և երկար նայում էր նրա
վրայ, ալևոր բխերը շարժելով, այդ գանա-
կի վրայ տակաւին չէր պաղել Բադգայի
արիւնը և նա այնպէս ծուռ էր և սուր: Իսկ
յետոյ մօտեցաւ Դանիլան Զօբարին և կոխեց
դանակը նրա կոնակը՝ հէնց սրտի դէմ: Չէ
որ ձեր զինուոր Դանիլան Բադգայի հայրն
էր:

—Ահա այդպէս, — զիմելով Դանիլային,
պարզ ասաց Լոյկօն և գնաց Բադգայի ետեից
հասնելու:

«Իսկ մենք նայում էինք: Պառկած էր
Բադգան, ձեռքը մազերի ծամով կրծքին սեղ-
մած և բաց աչքերը կապուտակ երկնքում
էին, իսկ նրա ոտքերի մօտ տարածուած էր
քաջ Լոյկո Զօբարը: Նրա դէմքի վրայ ընկել
էին գանգուերները և չէր երևում նրա երեսը:

«Կանգնած էինք ու մտածում էինք:
Դողդողում էին ձեր Դանիլայի բխերը և
կիտուել էին նրա թաւ յօնքերը: Նա նայում
էր երկնքին և լուռ էր, իսկ ալևոր Նուռը

պառկեց դէմքով գետնի վրայ և լաց և զաւ-
այնպէս, որ գողգողում էին ուսերը:

«Լաց լինելու էլ բան էր, բարեկամ: Այն...

«Գնում ես, դէ, ուրեմն գնա քո ճամբով
անշեղ: Շիտակ էլ գնա: Կարելի է դուր կոր-
չես էլ: Ահա այս է բոլորը, բարեկամ»:

Մակարը լռեց և ծխամորձը քիսացի մէջ
պահելով, վրայ բերաւ չէքմէնը կրծքին: Անձ-
րե էր մաղում, քամին սաստկացել էր և
ձովը մոնչում էր աւելի խուլ և բարկացոտ:
Մարող խարոյկին մէկը միւսի ետեից մօտե-
նում էին ձիերը և նայելով մեզ վրայ իրանց
խոշոր, խելօք աչքերով, անշարժ կանգնում
էին, չըջապատելով մեզ պինդ օղակով:

—Հօպ, հօպ, էհօյ, — փաղաքշանքով կան-
չեց նրանց Մակարը, ձեռքով զարկեց իր սի-
րած սևուկ ձիու բաշին և զիմելով ինձ ա-
սաց.

«Քնելու ժամանակ է, և նա զլիտով փաթաթ-
ուեց չէքմէնի մէջ և երկարումէկ ձգուելով
գետնի վրայ՝ լռեց: Ես չէի ուղում քնել: Ես
նայում էի դէպի ձովը: Դաշտի մթութեան և
օդի մէջ իմ աչքի առաջ լողում էր Բադգայի
արքայօրէն գեղեցիկ ու հպարտ կերպարանքը:
Նա սեղմել էր ձեռքը մազերի ծամով կրծքի
վերքի վրայ, և նրա թուխ, բարակ մատերի
տակից կաթ-կաթ ծորում էր արիւնը, ընկ-

նելով գետնի վրայ հրաշեկ—կարմիր աստղիկներով:

Իսկ նրա հետքից լողում էր քաջ կտրիճ Լոյկո Զօրարը. նրա դեմքը վարագուրել էին խիտ ու սև գանգուրների խոպոպները, իսկ նրանց տակից կաթկլթում էին ստեյպ սառը և խոշոր արցունքներ...

Սաստկանում էր անձրևը և ծովը երգում էր մի մռայլ և հանդիսաւոր հիմն՝ գեղանի գնչուների հպարտ զոյգի—Լոյկո Զօրարի և Բաղդայի, ծեր զինուոր Դանիլայի աղջկայ համար:

Իսկ նրանք երկուսը սահուն և անխօս պարտում էին գիշերուայ խաւարում և ամենևին չէր կարողանում գեղեցիկ երգիչ Լոյկոն հաւասարուել հպարտ Բաղդային...



[Faint, illegible handwritten text in Armenian script]



[Faint, illegible handwritten text in Armenian script]

« Ազգային գրադարան



NL0318582

10. 718

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

Ձեռք բերել կարելի է հրատարակչի մօտ՝ Ար-
мянսկը (Таврич. губ.), Ивану Давидову և թիֆլիզ
«Գիտատեխնիկական» գրախանութում: